Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 27-06-2024 թ. որոշմամբ
ՀՀ «ԴՈՐՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԴՈՐՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ՇԻՐԱԿ ԳՅՈՒՄՐԻ ԳՅՈՒՄՐԻ ՇԻՐԱԿԱՑԻ ՓՈՂ. 78/1
1.3 Պետական գրանցման համարը		222.160.1213255
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2022-01-17
1.5 ՀՎՀՀ-ն		05553706
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)77626307
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		suren@winminds.net
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Փիլոսյան Վարազդատ		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	1	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Գյումրու համայնքի, ք. Շիրակացու փողոց 78/1 առևտրի և սպասարկման օբյեկտի կապիտալ վերանորոգման ծախսումները իրականացնելու նպատակով	78,345,000
	Կայանի տեղակայման թույլտվության վճար	1,440,000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		

Digitally signed by
SUREN GHAZARYAN 3811960121
Date: 2024.07.01 14:49:56

9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Վերականգնողական կենտրոնի հիմնադրում	40,885,000	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	40,885,000	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	40,885,000	

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ ____21____էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

«ԴՈՐՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՈՎ

31 դեկտեմբեր 2023թ.

ԵՐԵՎԱՆ 2024

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն 3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 7
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն 8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 10

bakertilly

Baker Tilly Armenia CJSC
22 Hanrapetutyan Street
0010 Yerevan, Republic of Armenia
Tel: +374(10) 544-301/307/309
Email: info@bakertillyarmenia.com
www.bakertilly.am

27 06 2024 թ.

№ 022418

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Վ.Գևորգյան

Հայաստանի աուդիտորների և փորձագետ
հաշվապահների պալատի անդամ, ՀԳԳՀ 1 23 0816

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Դորյան Ընտանեկան Բարեգործական »
Հիմնադրամի Հոգաբարձուներին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Դորյան Ընտանեկան Բարեգործական» Հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրարելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն:

Հանգամանքի շեշտադրում

Ցանկանում ենք ուշադրություն հրավիրել այն փաստին, որ հիմնադրամը իր կանոնադրական գործունեությունը լիարժեք իրականացնելու համար կատարել և նախատեսում է իրականացնել կապիտալ նորոգման աշխատանքներ,որի մանրամասները նկարագրված են սույն հաշվետվության 4 ծանոթագրությունում:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ) համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Հիմնադրամը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումերից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այս ֆինանսկան հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ

ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Հիմնադրամի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա:
- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ Հիմնադրամի ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ՝ ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն ենք կրում աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկման ու կատարման համար: Մենք լիովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:
- Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Աուդիտոր

Մ.Մկրտչյան

27.06.2024թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Ծանոթագրություն	2023թ.	2022թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	252,870	235,457
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռք բերման կանխավճարներ	5	1,235	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**254,105**	**235,457**
Ընթացիկ ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	5	120	120
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6	54,065	12,786
Այլ ակտիվներ		112	41
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**54,297**	**12,947**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**308,402**	**248,404**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	7	252,489	234,388
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**252,489**	**234,388**
Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր գնումների գծով		7	60
Ընթացիկ հարկերի գծով պարտավորություններ	8	-	30
Պահուստների գծով պարտավորություններ	9	750	85
Եկամուտներին վերաբերող շնորհներ	10	55,156	13,741
Աշխատավարձի գծով պարտավորություններ		-	100
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**55,913**	**14,016**
Զուտ ակտիվներ		-	-
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ		**308,402**	**248,404**

Վ. Փիլոսյան

Սուրեն Ղազարյան

« Վինմայնդս» ՍՊԸ
լիազոր ներկայացուցիչ

Տնօրեն

27.06.2024թ.

1-19 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Ծանոթագրություն	2023թ.	2022թ.
Անհատույց ստացված ակտիվներից եկամուտ	11	22,650	22,056
Անհատույց ստացված ակտիվների գծով ծախսեր/Ծրագրային ծախսեր/	11	(12,601)	(12,635)
Համախառն շահույթ		**10,049**	**9,421**
Վարչական ծախսեր	12	(9,307)	(4,013)
Այլ գործառնական օգուտ(վնաս)	13	828	(132)
Գործառնական շահույթ		**1,570**	**5,276**
Ոչ գործառնական օգուտ(վնաս)	14	3,017	(2,789)
Շահույթ նախքան շահութահարկի նվազեցումը		**4,587**	**2,487**
Շահութահարկի գծով ծախս		-	-
Ֆինանսական տարվա զուտ շահույթ		**4,587**	**2,487**
Այլ համապարփակ եկամուտ		-	-
Ընդամենը համապարփակ արդյունք		**4,587**	**2,487**

1-19 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Կուտակված արդյունք	Ընդամենը
Մնացորդ առ 1 հունվար 2022թ.	-	-
Տարվա համապարփակ արդյունք	2,487	**2,487**
Տարվա համապարփակ արդյունքի ուղղումը եկամուտներին վերաբերող շնորհներին	(2,487)	**(2,487)**
Մնացորդ առ 31 դեկտեմբեր 2022թ.	-	-
Մնացորդ առ 1 հունվար 2023թ.	-	-
Տարվա համապարփակ արդյունք	4,587	**4,587**
Տարվա համապարփակ արդյունքի ուղղումը եկամուտներին վերաբերող շնորհներին	(4,587)	**(4,587)**
Մնացորդ առ 31 դեկտեմբեր 2023թ.		

1-19 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական գործունեությունից	**64,504**	**(3,215)**
Մուտքեր՝ դրամաշնորհներից	78,292	-
Մուտքեր՝գործառնական այլ գործունեությունից	1,493	1,320
Վճարումներ՝ նյութերի,աշխատանքների և ծառայությունների գծով	(3,193)	(1,175)
Վճարումներ՝ աշխատակիցներին և նրանց անունից	(4,542)	(1,944)
Վճարումներ՝ հարկերի և սոցիալական վճարների գծով	(7,470)	(1,230)
Վճարումներ՝ գործառնական այլ նպատակներով	(76)	(186)
Դրամական միջոցների զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից	**(25,604)**	**-**
Վճարումներ՝հիմնական միջոցների ձեռք բերումից	(24,372)	-
Վճարումներ՝ ներդրումային այլ նպատակներով	(1,232)	-
Դրամական միջոցների զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Մուտքեր՝փոխառությունների և վարկերի ստացումից		
Վճարումներ՝վարկերի և փոխառություններ մարման գծով		
Դրամական միջոցների զուտ հոսքեր	**38,900**	**(3,215)**
Արտարժույթային միջոցների փոխարժեքային տարբերություններ	2,379	(2,829)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	**12,786**	**18,830**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	**54,065**	**12,786**
*Տեղեկանք		
Ընդամենը՝համախառն մուտքեր	79,785	1,320
Ընդամենը՝համախառն վճարումներ	(40,885)	(4,535)

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Ընդհանուր տեղեկություններ

- «Դորյան Ընտանեկան Բարեգործական» Հիմնադրամ (այսուհետև՝ Հիմնադրամ) իրավաբանական անձ հանդիսացող ոչ առևտրային կազմակերպություն է:
- Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Գյումրի, Շիրակացի փ շ 78/1:
- Հիմնադրամը գրանցվել է որպես «Ժոզեֆ և Ալիս Դորիաններ» Ընտանեկան Հիմնադրամ 17.09.2019թ.: Պետական գրանցման համարն է՝ 222.160.1092396, հետագայում 17.01.2022թ. պետական գրանցում է ստացել ,,Դորյան Ընտանեկան Բարեգործական» Հիմնադրամը, որին 05.05.2022 թվ փոխանցման ակտի համաձայն իրավահաջորդության կարգով փոխանցվել է ,,Ժոզեֆ և Ալիս Դորիաններ» Ընտանեկան Հիմնադրամի բոլոր ակտիվները և պարտավորությունները:

- Համաձայն կանոնադրության Հիմնադրամի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում բժշկական, սոցիալական, կրթական ոլորտներում մասնավորապես անձանց բուժման, պրոթեզավորման, վերականգնողական և ցանկացած այլ բնույթի բժշկական գործունեության համար բարեգործության իրականացումն է, ինչպես նաև կարիքավոր անձանց նյութական և դրամական աջակցության, նվիրատվությունների և այլ բարեգործական ծրագրերի իրականացումն է:
- Հիմնադրամի խնդիրներն են.
  - Կազմակերպել ՀՀ-ում դպրոցականներին տեղեկատվական միջոցների կիրառմամբ կրթություն ստանալու հնարավորություններ ընձեռելը, կրթական ոլորտում առաջխաղացման նպաստելը, կրթական ծրագրեր առաջարկելը, կրթական և այլ ծրագրերի շրջանակներում ՀՀ կրթական և արտասահմանյան երկրների երիտասարդության համագործակցության և կապերի հաստատմանը և զարգացմանը .
  - Մշակել դպրոցի ուսումնական առարկաների կրթական ծրագրեր
  - Կազմակերպել և անցկացնել դասընթացներ, սեմինարներ և աշխատաժողովներ.
  - Երիտասարդներին և երեխաների ուղարկել այլ պետության ուսումնական հաստատություններ և ֆինանսավորել նրանց ուսուցումը.
  - Ստեղծել բարեգործական գրադարան՝ նյութական և էլ.կրիչներով՝ հանրային օգտագործման նպատակով,
  - Իրականացնել տարաբնույթ սոցիալական, բարեգործական ծրագրեր՝ բժշկական, սոցիալական ոլորտներում.
  - Իրականացնել նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ.

Կազմակերպությունը ֆինանսավորվում է կամավոր դրամական և այլ նվիրատվության միջոցներով, իրականացնում է Հիմնադրամի նպատակների իրականացմանը ծառայող նպատակային գործունեություն:

Հիմնադրամի հիմնադիրներ և հոգաբարձուների խորհրդի անդամներն են `

- Լուսինե Փիլոսյան
- Լիլիթ Սերոբյան
- Օֆելյա Հարությունյան

2. Պատրաստման հիմքերը

2.1. Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ) համաձայն, որը հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

2.2. Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական (պատմական) արժեքի սկզբունքով, բացառությամբ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնական ճանաչման պահին չափվում են իրական արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Կազմակերպության գործառնական արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը (դրամ), որը լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Կազմակերպության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:
Դրամը հանդիսանում է նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:
Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում՝ որում վերանայվել են և այն ապագա ժամանակշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

2.5 Գործունեության անընդհատությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով գործունեության անընդհատության սկզբունքի վրա, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում սովորական գործունեության ընթացքում: Հիմնադրամը գտնում է, որ ֆինանսական հաշվետվությունների փակման պահից մոտակա 12 ամսյա ժամանակահատվածում գործունեությունը չի դադարեցնի, քանի որ տիրապետում է բավարար ֆինանսական և գործառնական կարողությունների անընդհատ գործելու համար :

2.6 ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ում փոփոխությունների ընդունում

31.12.2023թ.-ի դրությամբ ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ում թողարկված բայց դեռ ուժի մեջ չմտած փոփոխություններ և լրացումներ չկան:

2.7 Նախորդ տարիների սխալների ուղղումներ և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

Ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ նախորդ ժամանակաշրջանների համադրելի տեղեկատվությունը, ներկայացվում են այնպես, իբր էական սխալներն ուղղվել են այն ժամանակաշրջանում, որում դրանք կատարվել են: Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները ներկայացվում են այնպես, իբր նոր քաղաքականությունը կիրառվել է Հիմնադրամի գործունեության սկզբից: Հետևաբար, ներկայացված յուրաքանչյուր ժամանակաշրջանին վերաբերող ուղղման գումարը ներառվում է այդ ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մեջ, իսկ ավելի վաղ ժամանակաշրջանին վերաբերող գումարները՝ սեփական կապիտալում: Ներակայացված ժամանակաշրջաններից ամենավաղ ժամանակաշրջանի կուտակված արդյունքների սկզբնական մնացորդը կարգավորվում է ճշգրտումների այն գումարով, որը վերաբերվում է այն ժամանակաշրջաններին, որոնք նախորդում են վերջին ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների համադրելի տեղեկատվության մեջ ներգրավված ժամանակաշրջաններին: Նախորդող ժամանակաշրջանների վերաբերյալ որևէ այլ տեղեկատվություն նույնպես վերաներկայացվում է:
Հաշվետու ժամանակաշրջանում ուղղման ենթակա սխալներ չեն հայտնաբերվել, ինչպես նաև չեն կատարվել հաշվապահական հաշվառման քաղաքանության տարրերի փոփոխություններ:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

3.1 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների միավորը, որը համապատասխանում է ակտիվի ճանաչման չափանիշներին, սկզբնապես չափվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով): Հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, հարկերը, ներկրման տուրքերը, պարտադիր այլ վճարները, որոնք համապատասխան մարմնի կողմից ենթակա չեն հետ վերադարձման:
Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ՝ հաշվի առնելով արժեզրկումից կուտակված կորուստը: Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

Շենքեր, շինություններ	20 տարի
Կառուցվածքներ	20 տարի
Համակարգիչներ	1 տարի
Տրանսպորտային միջոցներ	8 տարի
Սարքավորումներ	5 տարի
Արտադրական գույք, գործիքներ	8 տարի

Հիմնական միջոցի դուրս գրումից կամ իրացումից առաջացած արդյունքը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս:

3.2 Դեբիտորական պարտքեր

Որպես դեբիտորական պարտք են դասակարգվել այն ֆինանսական ակտիվները, որոնք ստեղծվել են Հիմնադրամի կողմից ուղղակիորեն պարտապանին (դեբիտորին) ապրանքներ կամ ծառայություններ տրամադրելու միջոցով, բացառությամբ այն դեբիտորական պարտքերի, որոնք

Հիմնադրամը մտադրված է անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառել, ինչպես նաև այլ ստացման ենթակա գումարները: Սույն բաժնում նկարագրված մոտեցումները կիրառվում են նաև տրված կանխավճարների հաշվառման նկատմամբ:

Դեբիտորական պարտքը դուրս է գրվում հաշվեկշռից միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը կորցնում է վերահսկողությունը պայմանագրային իրավունքների նկատմամբ, որոնք կազմում են այդ ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը):

3.3 Կրեդիտորական պարտքեր և մասհանումներ

Որպես կրեդիտորական պարտք են դասակարգվում այն մարման ենթակա գումարները, որոնք ստեղծվում են Հիմնադրամի կողմից ուղղակիորեն պարտատիրոջից (կրեդիտորից) ապրանքներ կամ ծառայություններ գնելու միջոցով, ինչպես նաև այլ վճարման ենթակա գումարները: Սույն բաժնում նկարագրված մոտեցումները կիրառվում են նաև ստացված կանխավճարների հաշվառման նկատմամբ:

3.4 Շնորհներ

Շնորհները (ներառյալ ոչ պետական աղբյուրներից ստացված) չեն ճանաչվում մինչև գոյություն չունենա վստահելի երաշխիք, որ Հիմնադրամը համապատասխանում է դոնորի պահանջներին և շնորհը կստացվի:

Այն շնորհը, որի առաջնային պայմանն է, որ Հիմնադրամը պետք է գնի, կառուցի կամ այլ ձևով ձեռք բերի ոչ ընթացիկ ակտիվներ, ճանաչվում է որպես հետաձգված եկամուտ՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և սիստեմատիկորեն արտացոլվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ տվյալ ակտիվի օգտակար ծառայության ընթացքում :

Այլ շնորհները սիստեմատիկորեն ճանաչվում են որպես եկամուտ այն ժամանակահատվածում, որի ընթացքում տեղի են ունենում այն ծախսերը, որոնց փոխհատուցմանն է ուղղված շնորհը : Շնորհները, որոնք պետք է ստացվեն արդեն տեղի ունեցած ծախսերի կամ կորուստների համար, նպատակ են հետապնդում ապահովել անմիջական ֆինանսական աջակցություն, համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են այն ժամանակահատվածում, որում ստացվել են :Հիմնադրամի գործունեության ընթացքում ստեղծված ֆինանսական արդյունքը հաշվետու տարվա արդյունքներով միացվում է եկամուտներին վերաբերող շնորհներին համաձայն կանոնադրության և ՀՀ գործող օրենքների

Շնորհը, որը Հիմնադրամի համար չի սահմանում որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամուտ, երբ շնորհի գծով մուտքերը ստացման ենթակա են Ակտիվներին վերաբերող շնորհները, ներառյալ իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային շնորհները, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են շնորհը գրանցելով որպես հետաձգված եկամուտ: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում Հիմնադրամը շնորհների գծով մնացորդները ներկայացնում է որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ պարտավորություն՝ կախված ակնկալվող եկամուտ ճանաչվելու ժամանակահատվածից:

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունում եկամուտներին վերաբերող շնորհների գծով դրամական հոսքերը ներկայացվում են որպես գործառնական գործունեության գծով հոսքեր,իսկ ակտիվներին վերաբերող շնորհները որպես ներդրումային գործունեությունից հոսքեր:

3.5 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է, հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարի ինքնարժեքը ներառում է պաշարների ձեռք բերման, ինչպես նաև դրանք ներկայիս վիճակին և գտնվելու վայր

հասցնելու ծախսումները: Պաշարների ինքնարժեքը որոշվում է Առաջին մուտք առաջին ելք (ԱՄԱԵ) բանաձևով:

3.6 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական գործիքների հաշվառումը իրականացվում է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի Հիմնական ֆինասական գործիքներ 11-րդ և Այլ ֆինանսական գործիքներին վերաբերող հարցեր 12-րդ բաժինների պահանջներին համապատասխան: Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում է ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ երբ փոխհատուցվում են ֆինանսական ակտիվների հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատուցումները:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվում կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը :

Հիմնական ֆինանսական գործիքներից առաջացող Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են գործարքի գնով՝ գումարած կամ հանած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք հետագայում չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնց գծով գործարքի հետ կապված ծախսումները ճանաչվում են ժամանակաշրջանի ծախս :
Այնուամենայնիվ, եթե ֆինանսական գործիքից բխող համաձայնությունն, ըստ էության, իրենից ներկայացնում է ֆինանսավորման գործարք՝ ապա ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես չափվում է ապագա վճարումների ներկա արժեքով՝ զեղչված համանման պարտքային գործիքի շուկայական տոկոսադրույքով:
Ոչ հիմնական ֆինանսական գործիքներից առաջացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև :

Ընդհանուր առմամբ, բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվների արժեզրկման գնահատումն իրականացվում է առնվազն յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ համապատասխանաբար ,,ֆինանսական ծախս,, և ,,ֆինանսական եկամուտ,, հոդվածներում :

3.7 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Կազմակերպություն, և ստացված եկամուտը հնարավոր է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Կազմակերպությունից, և ծախսը հնարվոր է արժանահավատորեն չափել:

3.8 Փոխարժեքային տարբերությունների ճանաչում

Արտարժութային գործարքներից եկամուտները (վնասը) ներառում է արտարժութով ակտիվների կամ պարտավորությունների վերագնահատումից եկամուտը (վնասը):

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժութային հոդվածների վերահաշվարկից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են որպես ծախս կամ եկամուտ: Հաշվետու ամսաթվի դրությամբ 31.12.2023 թվ ԱՄՆ դոլարի փոխարժեքը կազմել է 404.79 դրամ,եվրոյի փոխարժեքը կազմել է 447.9 դրամ:

3.9 Պահուստներ

Պահուստները ճանաչվում են, երբ Հիմնադրամն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտավորություն որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք և այդ պարտավորությունը կարելի է արժանահավատորեն չափել: Երբ Հիմնադրամն ակնկալում է, որ պահուստն ամբողջությամբ կամ դրա մի մասը կփոխհատուցվի, օրինակ՝ ապահովագրական պայմանագրի շրջանակներում, փոխհատուցման գումարը ճանաչվում է որպես առանձին ակտիվ, բայց միայն այն դեպքում, երբ փոխհատուցումը ըստ էության որոշակի է: Պահուստին վերաբերող ծախսը համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացվում է փոխհատուցումից զուտ:
Եթե դրամի ժամանակային արժեքը էական է, պահուստները զեղչվում են՝ օգտագործելով նմանատիպ բնութագրերով լրացուցիչ փոխառու միջոցների ներգրավմանը բնորոշ դրույքաչափը, որն, ըստ անհրաժեշտության, արտահայտում է պարտավորությանը հատուկ ռիսկերը: Եթե կիրառվում է զեղչում, ապա ժամանակի անցնելու հետևանքով պահուստի աճը ճանաչվում է ֆինանսական ծախսերում:
Հիմնադրամը պահուստներում է արտացոլում նաև աշխատակիցների նկատմամբ պարտադիր վճարովի արձակուրդների գծով պարտավորությունները, քանի որ ՀՀ աշխատանքային օրենսդրության համաձայն դրանք համարվում են կուտակվող վճարովի բացակայություններ:

3.10 Հարկային հաշվառում

Հարկերը հաշվարկված են ՀՀ հարկային օրենսդրությանը համապատասխան:

Հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, որի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտներից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները: Հետաձգված շահութահարկի գծով ծախսեր չեն հաշվառվում, քանի որ կազմակերպության գործունեությունը տեսանելի ապագայում հետաձգված շահութահարկի գծով պարտավորություններ չի առաջացնում:Հաշվետու ֆինանսական տարում առաջացել է 135 հազ դրամի հետաձգված հարկային ակտիվներ,որը չի ճանաչվել ֆինանսական հաշվետվություններում քանի որ կազմակերպությունը չի ակընկալում ապագայում հարկվող տնտեսական օգուտներ,որոնք կփոխհատուցեն այդ ակտիվները

3.11 Արժեզրկում

Հիմնական միջոցների

Մաշվող ակտիվները վերանայվում են արժեզրկման համար, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը

կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է դրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս՝ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում :

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև դրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ՝ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով եկամուտ՝ շահույթում կամ վնասում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

3.12 Դատական վեճեր

Հաշվետու ամսաթվի դրությամբ, կազմակերպության դեմ հարուցված որևէ փաստացի ,անավարտ կամ սպառնացող նշանակալի դատական հայցեր չկան:

4 Հիմնական միջոցներ և ոչ կառուցման ընթացքում գտնվող ակտիվներ

(հազար դրամ)

Շահագործման մեջ գտնվող ակտիվներ	Շենքեր և կառուցվածքներ	Արտադրատնտեսական գույք,գործիքներ և այլ հիմնական միջոցներ	Հող	Ընդամենը
Ակտիվի սկզբնական արժեք				
Նախորդ տարվա վերջի տվյալները 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**241,338**	**4,375**	**7,132**	**252,845**
Ավելացում	29,558	622	-	**30,180**
Օտարում	-	-	-	-
Ընթացիկ տարվա վերջի տվյալները 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**270,896**	**4,997**	**7,132**	**283,025**
Մաշվածություն նախորդ տարվա վերջի դրությամբ				
Սկզբնական մնացորդ	**16,626**	**762**	-	**17,388**
Հաշվարկված մաշվածություն	12,058	709	-	**12,767**
Օտարումներ	-	-	-	-
Վերջնական մնացորդ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**28,684**	**1,471**	-	**30,155**
Զուտ հաշվեկշռ. Արժեք				
Նախորդ տարվա վերջ	**224,712**	**3,613**	**7,132**	**235,457**
Ընթացիկ տարվա վերջ	**242,212**	**3,526**	**7,132**	**252,870**

2023 թվականի ընթացքում հիմնադրամը իրականացրել է Անշարժ գույքի (Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Շիրակացու փողոց 78/1 առևտրի և սպասարկմանօբյեկտ (1405.91 քմ) կապիտալ վերանորոգում: Շենքը գտնվում է օգտագործման համար ոչ մատչելի վիճակում և հիմնադրամի ծրագրերը իրականացնելու համար անհրաժեշտություն է առաջացել իրականացնել կապիտալ նորոգում: 2023 թվականի ընթացքում վերանորոգման աշխատանքների գծով իրականացվել է՝ 29,558 հազ դրամի չափով ծախսումներ, որը ըստ նախատեսվող ծրագրի առաջին փուլի նախնական ավարտն է: 2024 թվականի ընթացքում հիմնադրամը որոշել է կապիտալ նորոգման աշխատանքները իրականացնելու համար աշխատանքները վստահել «Մանհոմ» ՍՊԸ-ին, որի հետ 2024 թվականի ապրիլի 20-ին կնքվել է կապալի պայմանագիր, ընդհանուր՝ 197,680 հազար դրամ գումարի չափով:

5 Ոչ ընթացիկ ակտիվների ձեռք բերման կանխավճարներ և Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	2023թ.	2022թ.
Դեբիտորական պարտքեր իրացումների գծով	120	120
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռք բերման կանխավճարներ	1,235	-
Ընդամենը՝	**1,355**	**120**

6 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական հոսքերի հաշվետությունում ներկայացված դրամական միջոցները և դրա համարժեքները ներառում են հետևյալը.

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Դրամական միջոցներ՝տեղական արտարժույթով	247	963
Դրամական միջոցներ՝արտարժույթով	53,818	11,823
Ընդամենը՝	**54,065**	**12,786**

7 Ակտիվներին վերաբերող շնորհներ

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Մնացորդը առ 01 հունվար	**234,388**	**247,738**
Ստացված շնորհներ	30,180	-
Շնորհի ճանաչումը որպես եկամուտ	(12,079)	(13,350)
Մնացորդը առ 31 դեկտեմբեր	**252,489**	**234,388**

8 Ընթացիկ հարկերի գծով պարտավորություններ

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Եկամտային հարկի գծով	-	24
Պարտադիր սոցիալական վճարների գծով	-	6
Դրոշմանիշային վճարների գծով	-	-
Ընդամենը	**-**	**30**

9 Պահուստներ

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Աշխատակիցների փոխհատուցելի բացակայությունների գծով	750	85
Ընդամենը	**750**	**85**

10 Եկամուտներին վերաբերող շնորհներ

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Մնացորդը առ 01 հունվար	**13,741**	**18,501**
Տարվա ընթացքում ստացված շնորհներ	48,112	-
Տարվա արդյունքի ուղղումը եկամուտներին վերաբերող շնորհներին	4,587	2,487
Տարվա ընթացքում օգտագործած շնորհի գումարը	(11,284)	(7,247)
Մնացորդը առ 31 դեկտեմբեր	**55,156**	**13,741**

11 Անհատույց ակտիվներից՝Եկամուտներ/ Ծախսեր/

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Հետաձգված եկամուտներ	22,650	22,056
Հիմնական միջոցների մաշվածության գծով	(12,601)	(12,635)
Այլ ծախսերի գծով	-	-
Ընդամենը	**10,049**	**9,421**

12 Վարչական ծախսեր

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Հիմնական միջոցների մաշվածության ծախսեր	-	(2)
Աշխատավարձի ծախսեր	(6,057)	(2,457)
Գործուղման և ներկայացուցչական	-	(20)
Գրասենյակային ,տնտեսական և վարչական այլ ծախսեր	(635)	(51)
Փոստի և հեռահաղորդակցության	-	(13)
Բանկային ծախսեր,աուդիտ և խորհրդատվության ծախսեր	(2,449)	(1,168)
Չփոխհատուցվող հարկեր	(166)	(270)
Այլ ծախսեր	-	(32)
Ընդամենը՝	**9,307**	**4,013**

13 Այլ գործառնական օգուտ (վնաս)

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Վարձակալությունից եկամուտ	1440	-
Գործառնական այլ եկամուտներ(ծախսեր)	53	(47)
Պահուստների գծով ծախսեր	(665)	(85)
Ընդամենը՝	**828**	**(132)**

14. Այլ Ոչ գործառնական օգուտ (վնաս)

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Արտարժույթի վերագնահատումից օգուտ(վնաս)	2,381	(2,789)
Հողի շնորհներից եկամուտներ	713	-
Օգնություն	(77)	
Ընդամենը՝	**3,017**	**(2,789)**

15 *Գործարքներ կապակցված կողմերի հետ*

Հիմնադրամի կապակցված անձիք են հիմնադիրները և ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձինք: Հիմնադրամը իր գործունեության ընթացքում իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ: Կապակցված կողմերի հետ իրականացված գործարքների մանրամասները հետևյալն են.

ա) Գործարքներ վերադաս ղեկավարության հետ

Ստորև ներկայացված է վարչական ծախսերում ներառված վերադաս ընկերության հետ գործարքների մանրամասները.

Անվանումը	**2023թ.**	**2022թ.**
Աշխատավարձ և դրան հավասարեցված եկամուտներ	6,057	2,457
Ընդամենը	**6,057**	**2,457**

բ) Գործարքներ հիմնադիրների, փոխկապակցված այլ անձանց հետ, բացի ընթացիկ գործարքներից, որևէ այլ բնույթի գործարքներ չի իրականացվել:

16 Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և ամապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացրած գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը

տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով:
Այնուամենայնիվ, շուկայական ավելի խիստ ցնցումների պայմաններում Հայաստանի տնտեսությունը, ինչպես նաև Հիմնադրամը կարող են ընկնել այդ ճգնաժամի ազդեցության տակ, ինչի հետևանքները կարող են լինել նշանակալի: Հիմնադրամի վրա հնարավոր հետևանքները կարող են ներառել անվճարունակությունը, թուլացած հեղինակությունը, ապրանքների և ծառայությունների վաճառքի , ինչպես նաև ֆինանսական միջոցների ձեռբերման հետ կապված դժվարություններն և այլն: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Հիմնադրամի իրացվելիության անկման և հետևաբար առաջացնել անընդհատության խնդիր: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա տարակուսանքներն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել թե ինչ չափով դրանք լարող են ազդեցություն ունենալ Հիմնադրամի ակտիվների և պարտավորությունների մնացորդային արժեքների վրա:
Գործարար միջավայրի վրա իր ազդեցությունն է թողնում նաև աշխարհաքաղաքական անկայուն վիճակը՝ կապված հարևան որոշ երկրների հետ ոչ բարեկամական հարաբերությունների, միջազգային պատժամիջոցների և չհանգուցալուծված ռազմական տարաձայնությունների հետ:

17 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Սա է պատճառը , որ Հիմնադրամը ապահովագրված չէ գործունեության ընդհատման, ակտիվների կորստի կամ այլ անձանց կողմից պարտավորությունների չկատարման հետևանքով վնասներ կրելու իրադարձություններից:

18 Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ պահանջում է մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են վերանայման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացել ավելի մեծ հարկային ռիսկեր քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ կատարել է համապատասխան հատկացումներ հարկային պարտավորությունների գծով՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանությունների հիման վրա:

19 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Հիմնադրամը բավարարում է ՀՀ կառավարության պահանջները՝ կապված շրջակա միջավայրի հետ և չունի պարտավորություններ կապված շրջակա միջավայրի հետ:

Ֆինանսական հաշվետվությունների հաստատում

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել է հրապարակման համար 27 հունիս 2024թվ:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 01.07.2024 14:49